

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 48/4
11 օգոստոսի 2017թ.

Քննարկվեց «ԲԵՏՊՌՈ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր և միջին հարկ վճարողների ՀՏՎ 12.07.2017թ. N 1012311 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.05.2017թ. N1012311 հանձնարարագրի համաձայն «ԲԵՏՊՌՈ» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր և միջին հարկ վճարողների ՀՏՎ 12.07.2017թ. N1012311 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 24.014.893 դրամ:

Ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ ընկերությունը 2016թ. շահութահարկի հաշվարկում անավարտ շինարարությանը վերաբերվող ծախսերը ներառել է համախառն եկամտի նվազեցումների մեջ, որի հետևանքով հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել 63.961.465 դրամի չափով՝ խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները: Նշված գումարից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն պակասեցվել են ԱԱՀ-ից ազատված գործարքների մասով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ գումարով 212.664 դրամ, որի արդյունքում պակաս ցույց տրված հարկվող շահույթը կազմել է 63.748.801 դրամ: Արդյունքում, հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները՝ շահութահարկի գծով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 21.603.068 դրամ:

Նշվեց նաև, որ 2015թ. դեկտեմբերի 7-ից մինչև 2016թ. մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում «ԲԵՏՊՌՈ» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 31.03.2016թ. կազմվել է N 5012880 ակտը: Շահութահարկի մասով ստուգվել են 2013 և 2014 թվականների հաշվետու ժամանակաշրջանները: Ընկերության պնդմամբ 2013թ. ընթացքում առկա է եղել մոտ 76.5 մլն դրամի չափով հարկային վնաս, որը համախառն եկամտից ենթակա է նվազեցման հետագա 5 տարիների ընթացքում: Գանգատաբերը նշեց նաև, որ նախորդ ստուգումն իրականացնող տեսուչներին ներկայացվել են նշված վնասի առկայության վերաբերյալ փաստարկներ, սակայն դրանք հաշվի չեն առնվել և այդ մասին ստուգման ակտում որևէ բան նշված չէ:

31.03.2016թ. N5012880 ակտը «ԲԵՏՊՌՈ» ՍՊԸ կողմից բողոքարկվել է դատական կարգով (գործ թիվ ՎԴ/4651/05/16), որի վերաբերյալ վերջնական օրինական ուժի մեջ մտած դատական ակտ դեռ առկա չէ: Ընդ որում, 2013թ. հարկային վնասը 31.03.2016թ. N5012880 ակտում արձանագրելու պահանջը հանդիսանում է թիվ ՎԴ/4651/05/16 գործով հայցապահանջներից մեկը:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ 2016 թվականի շահութահարկի հաշվարկով համախառն եկամտից կատարվող նվազեցումներն, ըստ էության, անմիջականորեն կապված են նաև 2013 թվականի հաշվետու տարվա հարկային վնասի հետ, որը կարող է ազդել սույն գանգատով վիճարկվող Ակտով շահութահարկի հաշվարկման համար հիմք հանդիսացած համախառն եկամտի նվազեցումների հաշվարկի վրա, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2013թ. վնասի առկայության հարցը վիճարկվում է դատական կարգով, հետևապես՝ անհնարին է սույն վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ/4651/05/16 գործով վերջնական դատական ակտի կայացնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԲԵՏՊՈՒՈ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«ԲԵՏՊՈՒՈ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ